ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2024թ. N ----Ա

ՈՐՈՇՈՒՄ
«ԵՐԵՎԱՆԻ Հ. 156 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2021 թվականի հունվարի 20-ի N17-Ն հրամանի հավելվածի 12-րդ կետի 3-րդ ենթակետը և 13-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Երևանի հ.156 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել հայ գրող, արձակագիր և դրամատուրգ, ԽՍՀՄ և ՀՀ գրողների միության անդամ Զորայր Խալափյանի անվամբ՝ «Երևանի Զորայր Խալափյանի անվան հ.156 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

Երևան քաղաքի ավագանու
«Մայր Հայաստան» խմբակցության անդամ՝ Արմենակ Դանիելյան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ Հ. 156 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ գրող, արձակագիր և դրամատուրգ Զորայր Խալափյանը ծնվել է Արցախի Մարտակերտ շրջանի Թալիշ գյուղում: 1956 թվականին ավարտել է ԵՊՀ-ի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1956-1967 թվականներին որպես նախագծող ինժեներ աշխատել է Երևանի տարբեր գիտահետազոտական ինստիտուտներում: 1994-1996 թվականներին եղել է Հայաստանի գրողների միության վարչության քարտուղարը:

Խալափյանն արժանացել է Հայաստանի գրողների միության Դերենիկ Դեմիրճյանի անվան, ինչպես նաև ՀՀ կառավարության և ՀԳՄ սահմանած «Հրանտ Մաթևոսյան» և «Ոսկե եղեգն» նախագահական մրցանակներին: Խալափյանի առաջին ստեղծագործությունը «Հեղեղ» վիպակն է, որը լույս է տեսել «Սովետական գրականություն» ամսագրում 1962 թվականին: Նրան մեծ ճանաչում է բերել «Որտե՞ղ էիր, մարդ աստծո» (1966) վեպը: Այն թարգմանվել է ռուսերեն, ուկրաիներեն, չեխերեն, բուլղարերեն և լեհերեն: Վեպում նկարագրվում է մի գավառական բժշկի կյանքը: Հետագայում այդ վեպի հիման վրա նկարահանվել է համանուն բազմասերիանոց կինոնկարը, որի ռեժիսորն է եղել Ա. Աղաբաբովը: Նա նաև «Թթենի» պատմվածքի հեղինակն է, որի մոտիվներով նկարահանվել է համանուն ֆիլմը (ռեժիսոր Գ. Մելքոնյան): Գրել է նաև պիեսներ, որոնցից շատերը բեմադրվել են: «Սովետական գրող» հրատարակչությունը 1998 թ. հրապարակել է «Այսպիսի տխուր և ծիծաղելի բաներ» պատմվածքների ժողովածուն: Գրքում ամփոփված են Զ. Խալափյանի տարբեր տարիներում գրված և մամուլում հրապարակված պատմվածքներ: Ինչպես հուշում է վերնագիրը՝ պատմվածքները բազմաբնույթ են:

Զորայր Խալափյանը մահացել է 2008 թվականի հուլիսի 18-ին Երևանում, նրա մարմինն ամփոփված է Երևանի քաղաքային պանթեոնում:

«Երևանի հ.156 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի անվանակոչության հարցը քննարկվել և հավանության է արժանացել դպրոցի ղեկավարի կողմից: Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հունվարի 20-ի N17-Ն հրամանի հավելվածի 12-րդ կետի 3- րդ ենթակետի և 13-րդ կետի դրույթներով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

Երևան քաղաքի ավագանու

«Մայր Հայաստան» խմբակցության անդամ՝ Արմենակ Դանիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ Հ. 156 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0088, ք. Երևան, Շիրազի 11, հեռ. (+374 10) 34 50 49, էլ. փոստ school156@schools.am

№ 34/24 «07» 06 2024թ.

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԹՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ԱՐՄԵՆԱԿ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ա. Դանիելյան,
Ի պատասխան Ձեր 05 հունիսի 2024թ. N 142-2024 գրության՝ հայտնում եմ, որ դպրոցի անվանակոչության վերաբերյալ առարկություններ չունեմ: Սիրով կընդունեմ Ձեր առաջարկը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ПРАВЛЕНИЕ СОЮЗА ПИСАТЕЛЕЙ АРМЕНИИ
BOARD OF THE WRITERS' UNION OF ARMENIA

No ԳՄ-015 «17» 04 2024 թ.

Միության նախագահ
Председатель Правления
Chairman of the Board

Երևանի քաղաքապետարանի «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
պրն Արմենակ Դանիելյանին

Հարգելի պարոն Դանիելյան,

Ձեզ դիմում եմ 20-րդ դարի հայ արձակի ամենանշանավոր դեմքերից մեկի՝ Զորայր Խալափյանի անունով Երևանի հանրակրթական դպրոցներից մեկն անվանակոչելու առաջարկով:

Նրա հայտնի վեպերը՝ «Որտե՞ղ էիր, մարդ Աստծո», «Եվ վերադարձնելով Ձեր դիմանկարը», «Մեռնող հառնող», «Միջնաշեն», «Վասիլ Մեծ. Հայ կայսր Բյուզանդիայի կամ կճուճների թագավոր», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Ջերմանց մխիթարություն», վիպակների ու պատմվածքների ժողովածուներ արդեն քանի սերունդների սիրված գրքերն են: Խալափյանի բազմաթիվ պիեսներ բեմադրվել են ոչ միայն Հայաստանում, այլ նաև բազմաթիվ այլ երկրների նշանավոր թատրոններում՝ ռեժիսորներին բերելով փառք ու մրցանակներ: Այսօր էլ Խալափյանի պիեսները Հայաստանի մի շարք թատրոնների խաղացանկերում են:

Խալափյանին մեծ ճանաչում է բերել «Որտե՞ղ էիր, մարդ Աստծո» վեպը, որը թարգմանվել է անգլերեն, ռուսերեն, ուկրաիներեն, չեխերեն, բուլղարերեն և լեհերեն: Այդ վեպի հիման վրա նկարահանվել է համանուն հայկական առաջին բազմասերիանոց կինոնկարը, որի ռեժիսորն է եղել Առնոլդ Աղաբաբովը:

Զորայր Խալափյանի ամենասիրված գործերից մեկի՝ «Թթենի» պատմվածքի հիման վրա նկարահանվել է համանուն ֆիլմը (ռեժիսոր Գենադի Մելքոնյան):

Զորայրը հիանալի պատմվածքներ ու հեքիաթներ է գրել նաև հատուկ երեխաների համար:

Զորայր Խալափյանը 1994-1996 թվականներին եղել է Հայաստանի գրողների միության վարչության քարտուղարը:

Խալափյանն արժանացել է Հայաստանի գրողների միության Դերենիկ Դեմիրճյանի անվան, ինչպես նաև ՀՀ կառավարության և ՀԳՄ սահմանած «Հրանտ Մաթևոսյան» և «Ոսկե եղեգն» նախագահական մրցանակներին:

Զորայր Խալափյանը մահացել է 2008 թվականին, Երևանում, նրա մարմինն ամփոփված է Երևանի քաղաքային պանթեոնում:

Զորայր Խալափյանի անունով Երևանի դպրոցների մեկի անվանակոչումը հարգանքի տուրք կլինի մեծ գրողի, պայծառ մտավորականի 90-ամյա հոբելյանին, որն իր ամբողջ կյանքում ազնվորեն ծառայեց Հայաստանին ու հայ գրականությանը:

Կանխավ շնորհակալությամբ՝
ՀԳՄ նախագահ *Էդուարդ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ*

Ереван, Маршала Баграмяна 3 Yerevan, Marshal Baghramyan 3